

Թերթատեց ու փրցուց զանոնք իրենց տեղերէն, պրակ առ պրակ, բայց միւսնեքուն նման փոխանակ զետին թափելու, իր հետ միասին երկինք տանել ու Տիրոջը յանձնելու մտածուժով:

Բայց կար տակաւին վերջին պրակ մըն ալ. Յայտնութիւնը՝ զայլոց օրեռ համար զուշակութիւններով ու մարդարէութիւններով լեցուն: Ան պէտք էր որ մնար տակաւին, այս սնիծապարտ երկրագունդին վրայ, «ծինչէն ի կատարած աշխարհի»:

Հիմա, հսկայ Աստուածաշունչը եղած էր կմախք մը միաթեւ, Ծննդոցէն մինչեւ Յայտնութիւն, խլուած ու թերթատուած: Այն ասան Նուարդ, իր հոգեկարգի ուղարկման մէջ, սկսաւ ու բիշ աշխատանքի մը, — հաւաքում եւ յարգարում, ու ոմանք կուշտին, ոմանք կոնակին ու ոմանք սրունքներուն ասի տեղաւորելէ ետք՝ փոուեցաւ հանդիսա մը անոնց վրայ: Ու Յայտնութիւնը՝ սրպէս բարձ գլխին, եւ Նոր կտակարանը որպէս վերմակ՝ սրաին վրայ դրած, աչքերը փակեց ու մրմնջեց.

— Ահա՛, իմ տէրունական անկողինս . . . :

Դո՛ւրսը ամէն բան կ'սոճար մինչեւ լոյս, անձրեւաթափէն փրփրերախ:  
1927. Հալէպ ՏԻՓՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

#### Ա Յ Գ Ա Յ Ի Ն (\*)

Տակաւ երկնի կամարը սեւ կ'արծաթուի,  
Կը դալկանայ դողդոջ լոյսը աստղերուն,  
Գիշերին մութ շղարշը լուռ կը ծըլատի,  
Քառսի մը ծոցէն աշխարհը կը ծնի:

Անհունին մէջ ծիծեռնակներ կը սլաքեն  
Այգուն շողով քեւերն իրենց հինայած,  
Համբուրելով սառափ լանջքը ովկեանին,  
Առաւօտին գինովութիւնը կ'ըմպեն:

Հորիզոնէն երանգներ հուր կ'երկարին,  
Լերանց գլխուն սկիւ լաշակ կը ձըգուի,  
Նոսիները բայլ ու դանդաղ կ'օրօրուին,  
Թաթխուած մէջն արեւու ծիծղուն բոցին:

Տամուկ մարգեր հեգիկ-հեգիկ կը հեւան,  
Մառախուղ մը ծոյլ երկինգ կը բարձրանայ,  
Տե՛ս, կը շիկնի հորիզոնը սկեհան  
Արփով յդի եւ շողերուն օքեան:

Մըրտած է անէութիւնը ճօր ամպէ,  
Հոգի մ'անքիծ ինչպէս մեղքով պըզտորած,  
Թըռչող արեւն իր վարսերովը հուրէ,  
Սա մեծ բակին ձըգուած հողերը կ'աւլէ:

Պահ մը հագուշս քախիծն հսկայ կը նիրհէ,  
Առաւօտի անդորրութեան մէջ վըսեմ,  
. . . Երբ բնութիւնն հագնի շապիկ շղարշէ,  
Մերկանալով գիշերին մեղմ կարկաչէն:

Կիրիւն, 1913

Ա. Գ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(\*) Զարթօնքի կարճատեւ շրջանին, Կիրիւնի մէջ եւս սկսած են գրական-աշխարհային յուրջ ձեռնարկներ: Այս բանաստեղծութիւնը գտանք, 1913ի պոլսահայ մամուլին մէջէն: Կերեւի հեղինակը յետագային լքած է գրական աշխատանքը: